

Նարեկ Ա. Մկրտչյան

**ԹՅՈՒՐ-ՔԻԶՄԻ ԵՎ ԻՍԼԱՄԻ
ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ
ՂԱԶԱԽՍՏԱՆՈՒՄ***

Բանալի բառեր – Ղազախստան, Ռուսաստան, ազգային ինքնություն, ազգաշինություն, իսլամ, թյուրքական ինքնություն, անվտանգայնացում, թյուրքիզմ:

Մուտք

Խորհրդային Միության անկումից հետո ազգային և պետականաշինական մարտահավերժներին համարժեք պատասխաններ տալու խնդիրն ավելի քան օրակարգային էր Ղազախստանի համար, որի քաղաքակրթական ընտրության անորոշությունը, ազգային ինքնագիտակցության անբավարար մակարդակը և աշխարհին համաքայլ ընթացող մտավորականության բացակայությունը հանգեցրել էին ղազախների պատմական լուսանցքայնացմանը:

Ղազախների ազգային տեսակի ինքնահաստատումը (պահպանություն և զարգացում) վտանգվել էր կան հարդյունս կլանային ինքնաբավության, կան խորհրդային քվազի նորարարության: Չբարձրաձայնելով այդ մասին՝ նորանկախ Ղազախստանի կառավարող ընտրախավը մեկնարկում էր իրավիճակի հենց նման սթափ գնահատականից: Եվ գործարկում էր ղազախական հավաքականության արդիականացման մի համալիր ծրագիր, որի նպատակն էր վերջինիս քաղաքակրթական ցուցանիշերը համապատասխանեցնել Արևմուտքի և Արևելքի լավագույն նվաճումներին:

Պատմությունից «նվեր» ստացած հսկայական տարածքների վրա 1991 թվականի դեկտեմբերի 16-ին Ղազախստանի անկախ հանրապետության հռչակմամբ Կենտրոնական Ասիայում սկսվեց իրականացվել ապագայապաշտական (ֆուտուրիստական) ազգաշինության մի նախագիծ, որի ակունքներում ընկած էր նախագահ Նորսուլթան Նազարբաևի քարիզմատիկ անձնիշխանությունը¹: Հետաքրքիր է մասնավորապես, թե ինչպես էր

Թ. (ԺԵ) Գրաթի, թիվ 4 (60), հոկտեմբեր-դեկտեմբեր, 2017
ՎԿՎ համահայկական հանդես

*Հոդվածն ընդունվել է տպագրության 22.11.2017:

1 Այս համատեքստում նախագահի քարիզմատիկ իշխանությունը որոշակիորեն տարբերվում է Մաքս Վերերի դասական հղացքից, որը քարիզմատիկ իշխանությունը ներկայացնում է իբրև «անձի անհատականության որակական հատկանիշ, որը նրան առանձնացնում է հասարակ մարդկանցից

վարչակարգը փորձում լուծել մի շատ կարևոր խնդիր, երբ երկար տևողության ժամանակահատվածում հնարավորություն էր տրվում ժողովրդին շրջանցել տոհմացեղային հարաբերությունների մնացուկները:

Արդյունքում տեղի ունեցավ խզում նախկին ինքնութենական մոդելից, որովհետև ազգային ինքնանույնացման գործընթացը այդուհետ միջնորդավորվում էր **ազգային և քաղաքացիական միջավայրերով**, որոնց համադրվում էին նաև ավանդական արքետիպերը: Սա ըստ էության փոխառնված էր ազգաշինության **արևմտյան փորձառությունից**:

Սակայն Ն. Նազարբաևի վարչակարգը կանգնած էր բարդ փնտրտույթի առջև. ազգաշինության համատեքստում կառուցել միջհասարակական կայուն հարաբերություններ շուրջ 130 էթնիկ և 17 կրոնական խմբերի միջև²: Նպատակին հետամուտ՝ Ն. Նազարբաևը ձեռնամուխ եղավ մի շարք համակարգային վերափոխումների, որոնք ուղեկցվեցին կառավարման նոր ռազմավարության և հաստատությունների ձևավորումից մինչև պետական խորհրդանիշերի՝ հիմնի, դրոշի և գերբի փոփոխությամբ: Դրանցում առկա է ոչ միայն ազգային, այլ նաև քաղաքացիական խորհրդանիշների ներմուծման միտում, որոնց ազդեցությամբ ռուսը, դազախը, գերմանացին, կամ կորեացին հնարավորություն ունեն ինքնանույնացվելու Ղազախստան պետության և հանրույթի համաձիրում:

Ի տարբերություն նախկին Խորհրդային որոշ հանրապետությունների (Լատվիա, Լիտվա, Էստոնիա)՝ Ղազախստանը չսահմանափակեց ոչ տիրուցային էթնիկ փոքրամասնությունների իրավունքները, ավելին՝ խոստանալով երկրի բոլոր քաղաքացիներին ազգային իրավահավասարություն և ազատություն, նրանց համար հիմնեց կառավարության կողմից հովանավորվող նորանոր ազգային-մշակութային կենտրոններ³: Ի կատարումն այդ հիմնադրույթի՝ ստեղծվեց «Ղազախստանի ժողովուրդների ասամբլեան», որը 2007 թվականի սահմանադրական վերափոխումների արդյունքում վերանվանվեց «Ղազախստանի ժողովրդի ասամբլեա»⁴: Դրանով փորձ էր արվում արմատավորել **ղազախստանցու** գաղափարը, մի բան, որը ժամանակին փորձում էր ներմուծել Բորիս Ելցինը, երբ առաջադրում էր **ռուսաստանցի (россиянин)** հղացքը:

Ղազախստանի ազգաշինության նորարական հարացույցի գործարկման համար անհրաժեշտություն առաջացավ քաղաքային միջավայրի միջնորդությամբ ստեղծել ազգային ինքնության նոր կենսատարածք: Եվ խնդիր էր դրված դա իրագործելու ոչ թե գործող մայրաքաղաքի ճարտարապետական բովանդակության կերպափոխման ճանապարհով, այլ նոր գաղափարաբանությամբ հղացված և կառուցված պոստմոդեռնիստական

1 Երբագրում գերբնական, գերմարդկային կամ անովազն բացառիկ լիագորություններ կամ որակներ»: Տե՛ս **Weber M.**, The Theory of Social and Economic Organization, ed. **Parsons T.**, New York: Simon and Schuster, 2009, p. 358.

2 Տե՛ս Address by the President of the Republic of Kazakhstan, Leader of the Nation, N. Nazarbayev, Strategy “Kazakhstan-2050”: new political course of the established state, (2012). Official Site of the President of the Republic of Armenia, <http://www.akorda.kz>

3 Այս մասին առավել մանրամասն նկարագրված է նախագահ Ն.Նազարբաևի հեղինակած «Ղազախստանյան ուղի» գրքում: Տե՛ս **Nazarbaev N.**, The Kazakhstan Way, London: Stacey International, 2008, p. 78-85.

4 **Markus U.**, Kassymova D., Kundakbayeva Z., Historical Dictionary of Kazakhstan, Scarecrow Press, 2012, p. 35.

մայրաքաղաքի տեսլականով: Աստանան ստեղծվել է ըստ Ն. Նազարբաևի և իր ընտրախավի քաղաքակրթական ինքնարարումի նախագծի, որը լուրջ քաղաքաշինական շարժառիթներով չէր պայմանավորված. այն, ըստ էության, դազախական ազգային կենսաշխարհի վերակերպման մտածված ու հավասարակշիռ քայլ էր: Անբարենպաստ էին էթնիկ, ընկերային և մշակութային նախապայմանները. վտանգված էին դազախների միացյալ էթնիկ գիտակցությունը, պատմական հիշողությունը և լեզուն: Նոր մայրաքաղաքը պետք է լուծեր այդ խնդիրը:

Սակայն մայրաքաղաքի տեղափոխման պատճառների պաշտոնական մեկնաբանության մեջ ոչինչ չկա էթնո-քաղաքական, ազգային և պաշտպանական դիտանկյունների մասին⁵: Դրանք պարզապես լռության են մատնված, քանզի ունեն քողարկված (բայց դրանից ոչ պակաս ներունակ) հակառուսական միտվածություն. իրականում օրակարգում էր երկրի ռուսախոս հյուսիսում դազախախոս քաղաքական կենտրոնի ստեղծման հարցը: Աստանան պլանավորվում էր մի կողմից՝ իբրև ազգային տեսլականի, մյուս կողմից՝ արևմտյան ստանդարտների ցուցադրություն, ուսուցանում և դրանց իրագործման ընդհանրական ու անհատական կամք:

Համաձայն Ն. Նազարբաևի և իր ընտրախավի նորարարական նախագծերից մեկի՝ Ղազախստանը հայտագրել է իր հավատարմությունը եռալեզու (դազախերեն, ռուսերեն, անգլերեն) ապագային, որտեղ կարևորություն է տրվում դազախալեզու կրթությանը: Սակայն արևմտյան կրթական ստանդարտներին համաքայլ լինելու համար՝ սկսած 2009 թվականից, այս ուղղությամբ Ղազախստանում լուրջ քայլեր են ձեռնարկվում. ներդրվում է քեմբրիջյան համակարգով ձևավորված դպրոցների տարատեսակը, որ ստացել է **«Նազարբաև ինտելեկտուլ հանրակրթական դպրոց»** անվանումը: Միանգամայն նոր երևույթ է անգլալեզու համալսարանների հիմնումը. 2009 թվականին «Նազարբաև» համալսարանը Աստանայում, ապա 2011-ին «ԿԻՄԵՊ»-ը Ալմաթիում: Բարձրագույն կրթության արևմտյան կրթական ստանդարտի կողքին Ղազախստանում հիմնվեցին իսլամական հումանիտար դպրոցներ (լիցեյներ) և համալսարաններ: Դրանք ֆինանսավորում են առաջատար իսլամական երկրների կառավարությունները: **Այսպիսով, Ն. Նազարբաևի վարչակազմի խնդիրն է առանց ավելորդ զգացունքայնության հավասարակշռել նախկին մետրոպոլիան, իսլամը և քրիստոնեությունը, ազգային հիշողությունը և արդիականությունը, թույլ զարգացած դազախերենը և աշխարհի զարգացած լեզուները (ռուսերեն, անգլերեն), թյուրքական ունիվերսալիզմը և դազախական լոկալիզմը, ազգային դիքատոմիան և բացարձակ միավորման ուտոպիան:**

Այս համատեքստում փորձենք առանձնացնել դազախական ազգաշինության գործընթացի մասին գիտական ասույթում համեմատաբար քիչ քննարկված երկու մարտահրավերները՝ **իսլամն ու թյուրքիզմը:**

5 Sŋu Nazarbaev N., նշվ. աշխ., էջ 299: [Nazarbaev N., op. cit, p. 299].

1. Իսլամը և Ղազախստանի ազգաշինական փորձառությունը

Հետխորհրդային Ղազախստանի ազգաշինության նորարարական դրսևորումներից մեկն էլ պետության հիմքում աշխարհիկ-քաղաքացիական արժեքների ներդրումն էր: Ի տարբերություն իսլամական պատմական ավանդույթ ունեցող մի շարք երկրների՝ Ղազախստանը իր առջև ծառայած խնդիրներին չպատասխանեց իսլամով: Դա ուներ իր հստակ պատմական արմատները. ղազախների նախակենցաղ կենսակերպը և կենտրոնացված պետության բացակայությունը դարեր շարունակ խոչընդոտել էին կրոնի հաստատութենացմանը: Ժամանակին ցարիզմը նրանց շրջանում կրոնական ինքնագիտակցությունը հնարավորինս ցածր մակարդակի վրա էր պահել: Թերևս այս երկու կարևոր նախապայմաններով կարելի է բացատրել ղազախական հասարակությունում արմատական իսլամի թույլ դրսևորումը:

Այդուամենայնիվ, պետք է նշել, որ իսլամի քաղաքակրթական արժեքները հիմնովին դուրս չեն մնացել արդի Ղազախստանի ազգաշինական գործընթացից: Այս առումով բավականին կարևոր է հասկանալ ղազախական ազգային ինքնության կրոնական ենթաշերտը: Կրոնական ինքնության հարացույցը անհրաժեշտ է դիտարկել ինչպես էթնիկ, այնպես էլ քաղաքացիական ազգաշինական ծրագրերի ծիրում: Հատկապես պետք է արձանագրել իսլամական արժեքների կիրառման խորհրդանշանային կարևորությունը, ինչն օգտագործվում է նաև որոշակի քաղաքական գործընթացների օրինականացման նպատակով: Հայսմ հարկ է արձանագրել երկու կարևոր և անգամ՝ արտաքինից իրար հակասող գործընթացներ. Ղազախստանում մի կողմից առկա են աշխարհիկացումն ամրապնդող, մյուս կողմից՝ իսլամի արժեքները վերակենդանացնելու միտումներ: Տվյալ պարագայում հնարավորություն է ստեղծվել այս երկու միտումների հավասարակշռման համար հակամետ բևեռները դիտարկել մեկ ընդհանրական համատեքստում:

Այդուամենայնիվ, անկախացած Ղազախստանի պետական ընտրախավը սատարում էր «իսլամացման» միտումին: Եվ արդյունքներն իրենց սպասել չտվին. համաձայն 2009 թվականի ազգային վիճակագրության տվյալների երկրի ազգաբնակչության 70,2 տոկոսը դավանում է իսլամ⁶: Սակայն պետք է արձանագրել, որ իսլամի հետևորդների նշված 70,2 տոկոսը կազմված է ոչ միայն ղազախներից այլև Ղազախստանում ապրող այլ մահմեդականներից՝ ուզբեկներ, ույղուրներ, թուրքեր, ադրբեջանցիներ, դուրգաններ, քրդեր, տաջիկներ, չեչեններ և ղրղրզներ⁷:

Ղազախստանը պատմականորեն եղել է նաև քրիստոնեության ազդեցության համաձիրում, և համաձայն 2009 թվականի մարդահամարի՝ Ղազախստանի ազգաբնակչության 26,3 տոկոսը քրիստոնյաներ են, որոնց մեջ մեծամասնություն են կազմում ռուսները, ուկրաինացիները և բելո-

6 Стн «Итоги Национальной Переписи Населения Республики Казахстан 2009 Года», Аналитический отчет. Агентство Республики Казахстан По Статистике, Астана 2011, с. 25. [Itogi Natsionalnogo Perepisi Naselenia Respubliki Kazakhstan 2009 Goda, Analiticheskiy otchot. Agenstvo Respubliki Kazakhstana po statistike, Astana 2011, s.25].

7 Стн նույն տեղում, էջ 25: [Ibid., p. 25].

ուսները⁸:

Հետաքրքիր է, թե իսլամը հանրային ինչ ընկալում ունի Ղազախստանում: 2000–2002 թվականների հարցախույզը՝ անցկացված հանրապետության 14 տարածաշրջաններում (ներառյալ Աստանան և Ալմաթին) ներկայացնում է հետևյալ պատկերը. հարցվածների 51.6 տոկոսը իրեն համարել է մահմեդական, որից 47.2 տոկոսը գտնում է, որ մահմեդականությունը իրենց տրված է ի ծնե՝ իբրև ազգային մշակույթի, ավանդույթների, սովորույթների և նախնիների հոգևոր ժառանգության հանդեպ հարգանքի դրսևորում⁹:

Բայց պետք է նաև արձանագրել, որ անգամ իրենց մահմեդական համարող ղազախների մեծամասնությունը չի հետևում իսլամի հինգ կարևոր հավատո հանգանակներին և մասնավորապես չի մասնակցում օրական հինգ անգամ նամազին¹⁰: Ուստի նրանց՝ իսլամի հետ ինքնանույնացումն անհրաժեշտ է դիտարկել հետխորհրդային ազգային ինքնության փնտրտուքի համատեքստում:

Թերևս ազգաշինական գործընթացների համաձիգում պետք է դիտարկել նաև մզկիթաշինության և կրոնական կազմակերպությունների հիմնման այն եռանդը, որը ներհատուկ է հետխորհրդային Ղազախստանին. 1989–ի 46 մզկիթների թիվը 1998–ին հասել էր 1000–ի¹¹: Իսկ 2001 թվականին Ղազախստանում արդեն գործում էր 1408 մզկիթ և 1372 իսլամական կազմակերպություն¹²: Մզկիթաշինությունը շարունակվեց նաև 2000–ականներին և մասնավորապես նախագահի հովանավորությամբ 2005 թ. բացվեց «Նուր Աստանա», իսկ 2012–ին սուֆիական բանաստեղծ Խոջի Ահմեդ Յասավիի հոգևոր սխարանքին նվիրված՝ Ղազախստանի և Կենտրոնական Ասիայի ամենամեծ մզկիթը՝ «Հազրեթ սուլթանը»: Համարվում է, որ հենց նրանից է սկսվում թյուրքական միստիկ իմաստասիրությունը՝ իր հիմքում ունենալով իսլամն ու նոր պլատոնականությունը:

Ինչպես նշվեց, իսլամի արժեքների տարածմանը նպաստում էր երկրի բարձրագույն ղեկավարությունը: Այս առումով 1994 թվականին խորհրդանշական քայլ արեց նահագահ Ն. Նազարբանը. նա կատարեց հաջ՝ ուխտագնացություն առ Մեքքա¹³:

Ազգաշինական գործընթացները հետխորհրդային Ղազախստանում ուղիղ կապի մեջ են նաև երկրի արտաքին քաղաքական վեկտորի հետ: Իսլամը հնարավորություններ է տալիս անմիջական կապեր հաստատել մահմեդական աշխարհի այնպիսի առանցքային երկրների հետ, ինչպիսիք են Թուրքիան, Սաուդյան Արաբիան, Արաբական Միացյալ Էմիրություն-

8 Տե՛ս նույն տեղում, էջ 25: [Ibid., p. 25].

9 Տե՛ս **Телебаев Г. Т.**, Религиозная идентификация населения и религиозная ситуация в республике Казахстан, «Социс». 2003, N 3. с. 102. [**Telebaev G.T.** Religioznaya Identifikacia Naseleniya i Religioznaya Situaciya v Respublike Kazakhstan, “Socis”. 2003, 3, s. 102].

10 Տե՛ս **Omelicheva M. Y.**, Islam and power legitimation: instrumentalisation of religion in Central Asian States, Contemporary Politics, 22:2, pp. 150–151.

11 Տե՛ս **Omelicheva M. Y.**, Islam in Kazakhstan: a survey of contemporary trends and sources of securitization, Central Asian Survey, 30: 2, 2011, p. 244.

12 Տե՛ս **Телебаев Г. Т.**, նշվ աշխ., էջ 105. [**Telebaev G. T.**, op. cit. p. 105].

13 Տե՛ս **Yemelianova G. M.**, Islam, national identity and politics in contemporary Kazakhstan, Asian Ethnicity, 15:3, p. 293.

ները, Եգիպտոսը: Շուտով Եգիպտոսի, Թուրքիայի ինչպես նաև Քուվեյթի հովանավորությամբ Ղազախստանի տարբեր քաղաքներում հիմնադրվելու էին իսլամական գաղափարական ուղղվածության բարձրագույն ուսումնական հաստատություններ, ինչպես օրինակ՝ «Իսլամական մշակույթի Նուր-Մուբարակ եգիպտական համալսարանը», «Ահմեդ Յասավի թուրք-ղազախական միջազգային համալսարանները», «Հարավ ղազախստանյան հումանիտար ակադեմիան» և այլն¹⁴: Հարկավ, կրթական այս օջախները գաղափարական հիմք էին ստեղծելու իսլամի ամրապնդման համար, որն իր հերթին նոր մարտահրավերներ էր նետելու գործող համակարգին: Այդ մարտահրավերներին, որոնց դեռ կանդրադառնանք, նազարբանյան վարչակարգը պետք պատասխաներ իսլամի զսպան քաղաքականությամբ, իսկ ավելի կոնկրետ «արտաքին իսլամի զսպան» քաղաքականությամբ:

2. Պետական քաղաքականությունը: Իսլամի հաստատութենացումը

Մինչ խորհրդային կարգերի փլուզումը Ղազախստանի մահմեդականների կրոնական հարցերը համակարգվում էին դեռևս 1943 թվականին Տաշքենդում հիմնադրված «Կենտրոնական Ասիայի և Ղազախստանի մահմեդականների հոգևոր ադամիխստրացիայի» (ՍԱԳՈՒՄ) կողմից: Անկախության հռչակումից հետո, առանցքային մարտահրավերներից էր կրոնի հաստատութենականացման հիմնախնդիրը: Իսլամի արժեքները պետք է կիրառվեին ազգաշինության նպատակների համար: Դեռևս անկախության հռչակումից մեկ տարի առաջ՝ 1990 թվականին, ստեղծվեց «Ղազախստանի մահմեդականների հոգևոր կառավարման կոմիտեն» կամ մուֆթիությունը¹⁵: Հաշվի առնելով Ղազախստանի բազմաէթնիկությունն ու ժողովրդավարական արժեքները՝ երկրի ղեկավարությունը շտապեց հաստատութենականացնել նաև այլ կրոնական ուղղությունները: Ղազախստանն սկսեց ակտիվորեն անդամակցել իսլամական համաշխարհային կառույցներին: Քաղաքականություն, որի ամենացայտուն դրսևորումը դարձավ անդամակցությունը «Իսլամական կոնֆերանս» կազմակերպությանը 1995 թվականին¹⁶:

Հետխորհրդային անցումային շրջանում ղազախական հասարակությունում մեկնարկել էր իսլամի արժեքների քաղաքական և մշակութային վերաներկայացման գործընթացը: Օրինակ՝ անդրադառնանք լեզվաքաղաքանությունը, երբ ազգային լեզվի հանրայնացումը կապվում է նաև իսլամի արժեքներին կամ որոշակիորեն կազմակերպվում է վերջիններիս միջոցով: Սակայն ինչպե՞ս էին ազգային լեզուն և կրոնը համատեղվում ապահովելու հանրային ողջախոհություն իշխող համակարգի նկատմամբ: Արդի հետազոտողներից Ս. Քումինգսը նշում է, որ անգամ բազմամշակութայնության պարագայում Ղազախստանի ընտրախավը օգտագործում է

14 Տե՛ս նույն տեղում, էջ 292: [Ibid, p. 292].

15 Տե՛ս Официальный сайт духовного управления мусульман Казахстана, <http://old.muftyat.kz/ru> [Officialni sait dukhovnogo upravlenia musulman Kazakhstan].

16 Տե՛ս Yemelianova G. M., op. cit. p. 293.

իսլամի արժեքները իր լեգիտիմացումը ապահովելու համար¹⁷: Որպես հիմնավորում՝ բերվում է հասարակության շրջանում ղազախալեզու Ղուրանների տպագրմանը և տարածմանը տրվող պետական աջակցությունը¹⁸: Առաջին հայացքից սա կարելի ներկայացնել իբրև հասարակության իսլամականացմանը միտված քայլ: Սակայն, դա այդքան էլ այդպես չէ. փորձ է արվում ազգային լեզվի կիրառելիությունը բերել ավելի էնոցիոնալ և հոգևոր դաշտ: Ազգային լեզվի ուսուցման կարևորության համադրումը իսլամի արքետիպերին և արժեքներին կատարվում է նաև ղազախների պատմական հիշողության և ազգային ինքնության միջև կապ հաստատելու նպատակով: Այս համատեքստում ղազախների պատմական հիշողության խաղարկումը միտված է շեշտելու այն հանգամանքը, որ ազգային լեզուն ռուսական համակարգի կողմից լուսանցք մղված ազգային միակ արժեքը չէ: Ռուսական մշակույթի և աշխարհիկ կրթական համակարգի ներդրման արդյունքում ղազախական հասարակության շրջանում տեղի է ունեցել խզում իսլամական խորքային գաղափարներից¹⁹: Միով բանիվ՝ ղազախալեզու Ղուրանների հանրայնացումը ունի խորհրդանշական, բայց լուրջ ինքնութենական ազդեցություն՝ ազգային և կրոնական գաղափարների վերարժևորման առումով:

Իսլամական արժեքների ամրապնդումը և տարածումը չէր սահմանափակվում Ղուրանի թարգմանությամբ ու տարածմամբ. երկրում գործող իսլամական տարբեր կառույցները և շարժումները ձեռնամուխ եղան ռուսերենից, արաբերենից և անգամ թուրքերենից իսլամի մասին տարատեսակ նյութերի ղազախերեն թարգմանությամբ: Այս շարքում հույժ կարևոր դերակատարություն ունեն իսլամական ԶԼՄ-ները և հրատարակչությունները: Մոավոր վերնախավի շրջանում համոզում կա, որ այս գործընթացը նոր լիցքեր է հաղորդում ազգային ինքնագիտակցությանը: Հարկավ՝ ծայրահեղականությունից խուսափելու պայմանով:

Նման ծրագրերի իրագործման գործում առանցքային դերակատարություն ունի «Սուսիլման» հրատարակչությունը: Նրա քարոզչական, խրատական, բարոյագիտական և աստվածաբանական գրքերն ու բրոշյուրները՝ հրատարակված միլիոնավոր օրինակներով, և մեծ տարածում ունեն Կենտրոնական Ասիայում²⁰: Նմանատիպ առաքելությամբ է առաջնորդվում «Асыл арна» կամ «Լուսավոր ուղի» հեռուստաալիքը, որը ղազախերենով և ռուսերենով հեռարձակում է իսլամին նվիրված հաղորդաշարեր²¹: Զանգվածային լրատվության այլ միջոցներ նույնպես մասնակցում են իսլամի հանրայնացման ղազախական ծրագրի իրականացմանը:

Այս և այլ իսլամական հրատարակչությունները նաև օտարերկրյա կրոնակրթական հիմնադրամների գործունեության արդյունք են: Դրանց շարքին է պատկանում, օրինակ, Ֆեթուլլահ Գյուլենի շարժումը, որը ամուր

17 Տե՛ս **Cummings S.**, Kazakhstan: Power and the Elite, London: I. B. Tauris, p. 88.

18 Տե՛ս նույն տեղում, էջ 88. [Ibid, p. 88].

19 Տե՛ս **Landau J.M., Kellner-Heinkele B.**, Politics of Language in the Ex-Soviet Muslim States: Azerbaijan, Uzbekistan, Kazakhstan, Kyrgyzstan, Turkmenistan, Tajikistan, London: C. Hurst & Co. Publishers, 2001, pp. 20-21.

20 Տե՛ս **Schwab W.**, Establishing an Islamic niche in Kazakhstan: Musylman Publishing House and its publications, Central Asian Survey, 30:2, 2011, p. 228-29.

21 Տե՛ս **Yemelianova G. M.**, op. cit. p. 291.

արմատներ ունի Կենտրոնական Ասիայում և մասնավորապես Ղազախստանում: Գյուլենական ուսմունքի ընկալումը հանրային լայն զանգվածների կողմից բխում է Ղազախստանի կողմից ընտրված չափավոր իսլամի դպրոցի՝ **հանաֆիականության** հետ վերջինիս փոխկապակցվածությունից: Գյուլենական շարժման նպատակներից է երկրում բարձրացնել համաթյուրքական միասնության և իսլամի հանրային գիտակցությունը, մասնավորապես՝ երիտասարդության շրջանում, միավորել Ֆեթուլլահ Գյուլենի ուսմունքի հետևորդներին, որոնց գաղափարական հասունացման հիմքերը դրվում են Ղազախստանում և Կենտրոնական Ասիայի այլ երկրներում գործող գյուլենական լիցենզիաներով²²: Թուրքիայում 2016 թ. տեղի ունեցած ռազմական հեղաշրջման անհաջող փորձից հետո, Կենտրոնական Ասիայում գործող գյուլենական դպրոցները էրդոհանյան կլանի կողմից խիստ քննադատության ենթարկվեցին և Թուրքիայի կառավարությունը պաշտոնապես դիմեց Ղազախստանին՝ փակելու գյուլենական դպրոցները, որին ի պատասխան՝ Ն. Նազարբանը Անկարայում հայտնեց զգուշավոր քաղաքականություն վարելու Ղազախստանի պատրաստակամության մասին²³: Այսպիսով, Ն. Նազարբանի վարչակազմը սթափվել է և շուտափույթ կերպով փոխում է իրավիճակը՝ ծայրահեղական տրամադրություններից խուսափելու մտահոգությամբ:

3. Արտաքին իսլամի զսպման նոր քաղաքականությունը

Խորքային առումով իսլամի տարածումը մարտահրավեր է Ղազախստանի ազգաշինության քաղաքացիական բաղադրիչին: Ղազախստան ընտրախավն իսլամի բացասական դրսևորումները կապում է արտաքին ներգործության հետ և իր վերաբերմունքն այս մարտահրավերի նկատմամբ սահմանում է իբրև «արտաքին իսլամի զսպման կամ վտանգագերծման քաղաքականություն»: Այս հղացքը հետազոտական շրջանակներին հայտնի է իբրև «Իսլամի անվտանգայնացում» (Securitization of Islam) անվամբ: Հղացքն առաջադրվել է անվտանգության ուսումնասիրությունների (Security Studies) Կոպենհագենյան դպրոցի կողմից²⁴: Այս քաղաքականությունը մասնավորապես իր ակտիվ գործառնությունից մեջ մտավ 2000-ականներին:

Պաշտոնական դիսկուրսում արմատական իսլամը սկսեց մեկնաբանվել իբրև ազգային անվտանգության սպառնալիք, որի մասին նախագահ Ն. Նազարբանը շարունակաբար զգուշացնում է Կենտրոնական Ասիայի առաջնորդներին²⁵: Այսու հատկանշվում է քաղաքական երեք վեկտոր. **ա. չարնի հարաբերությունները ռուսական ուղղափառ՝ քրիստոնյա մեծաթիվ համայնքի հետ, բ. հավատարիմ մնալ ազգաշինության քաղա-**

22 Տե՛ս **Balci B.**, Fethullah Güllen's Missionary Schools in Central Asia and Their Role in the Spreading of Turkism and Islam, **Religion, State & Society** 31: 2, 2003, pp. 155-156.

23 Տե՛ս **Pannier B.**, The Gulen Schools in Central Asia, Radio Free Europe Radio Liberty, 2016. <https://www.rferl.org/a/majlis-podcast-gulen-schools/27919459.html>

24 Տե՛ս **Buzan B., Wæver O.**, de Wilde J., Security: A New Framework for Analysis, London: Lynne Rienner Publishers, 1998, p. 25.

25 Տե՛ս **Omelicheva M. Y.**, 'Islam in Kazakhstan: a survey of contemporary trends and sources of securitization', **Central Asian Survey**, 30: 2, 2011, p. 249.

քացիական ուղեգծին, գ. վերահսկողություն հաստատել երկրի կրոնական ոլորտի նկատմամբ՝ բացառելով քաղաքական իսլամի զարգացումը:

Իբրև հիմնավորում կարող ենք բերել պետական աջակցությունը Ղազախստանի ավանդական կրոններին՝ ուղղափառ քրիստոնեությանը և հանաֆիական իսլամի տարատեսակին, որոնց միջև երկխոսությունը պաշտոնական դիսկուրսում ներկայացվում է իբրև միջէթնիկ համաձայնության և հասարակական անդորրի հաստատման միակ ուղի²⁶:

Ընդգծելու համար քաղաքացիական ազգաշինության և կրոնական հավասարության գաղափարը նախագահ Ն. Նազարբանի նախաձեռնությամբ 2004 թ. սեպտեմբերին Աստանայում հրավիրվեց «Համաշխարհային և ավանդական ազգային կրոնների առաջնորդների առաջին կոնգրեսը», որին մասնակցեցին Քրիստոնեությունը, Իսլամը, Բուդդայականությունը, Հուդայականությունը, Դաոսիզմը, Հինդուականությունը և Սինտոիզմը ներկայացնող 17 միջազգային պատվիրակություններ²⁷: Կոնգրեսում ընդունվեց որոշում երեք տարին մեկ Աստանայում անցկացնել նույնատիպ ֆորում, որով կարծես Ղազախստանի ղեկավարությունը նպատակ ուներ Աստանան վերածելու միջկրոնական համաձայնության մայրաքաղաք-խորհրդանիշի: Ն. Նազարբայևի առաջարկով անգամ որոշում կայացվեց հաջորդիվ կայանալիք համաշխարհային կրոնական կոնգրեսի համար կառուցել խորհրդանշանային կառույց, որում կլինեն մզկիթ, եկեղեցի, սինագոգ, բուդդայական տաճար ինչպես նաև կգործեն ««Ղազախստանի ժողովուրդների ասամբլեան» և ազգային-կրոնական կենտրոնները»²⁸: Երեք տարի անց՝ 2006 թ. տեղի ունեցած «Համաշխարհային և ավանդական ազգային կրոնների առաջնորդների երկրորդ կոնգրեսն» արդեն անցկացվեց նորակառույց «**Խաղաղության և հաշտեցման պալատում**»:

Քաղաքացիական և կրոնական հավասարության արժեքների ամրագրման մտահոգությամբ 2011 թվականի հոկտեմբերի 11-ին ընդունվեց «**Կրոնական գործունեության և կրոնական միավորումների մասին**» նոր օրենք: Համաձայն դրա հիմնադրույթի՝ « ... Ղազախստանի Հանրապետությունը հայտարարում է իրեն ժողովրդավարական, աշխարհիկ հանրապետություն, վերահաստատում է յուրաքանչյուրի խղճի ազատության իրավունքը, երաշխավորում է յուրաքանչյուրի հավասարությունն օրենքի առաջ՝ անկախ կրոնական համոզմունքների, ճանաչում է հանաֆիական իսլամի և ուղղափառ քրիստոնեության պատմական դերը ազգի մշակույթի և հոգևոր կյանքի զարգացման գործում, հարգում է Ղազախստանի ժողովրդի հոգևոր ժառանգությանը զուգորդվող մյուս կրոնները, ընդունում է միջկրոնական ներդաշնակության, քաղաքացիների կրոնական հավատամքի նկատմամբ կրոնական հանդուրժողականության և հարգանքի կարևորությունը (ընդգծումը մերն է Ն. Մ.)»²⁹:

26 Տե՛ս նույն տեղում, էջ 251: [Ibid, p. 251].

27 Տե՛ս Съезд Лидеров Мировых И Традиционных Религий В Астане, <http://www.religionscongress.org/content/view/18/32/lang.ru/> [Sezd Liderov Mirovikh i Tradicionnikh Religii v Aстане].

28 Նույն տեղում: [Ibid].

29 Закон Республики Казахстан О религиозной деятельности и религиозных объединениях [Zakon

Օրենքով արգելվում է աղոթքի պարտադրանքը դպրոցներում, քրեա-կատարողական հիմնարկներում, ռազմական և պետական այլ հաստատություններում: 2011 թվականին նախագահ Ն. Նազարբաևի նախաձեռնությամբ կառավարությանը կից ստեղծվեց «Կրոնական հարաբերությունների գործակալությունը», որի նպատակն էր հաստատութենականացնել պետության վերահսկողությունը կրոնական ոլորտի նկատմամբ³⁰: Հենց այս կառույցի հիման վրա էլ 2016 թ. պետք է ստեղծվեր Կրոնական և քաղաքացիական հասարակության հարցերով նախարարությունը³¹:

Պատկերն ամբողջացնելու համար հարկ է ընդգծել, որ իսլամի գալման քաղաքականությունը հատուկ է ոչ միայն Ղազախստանին, այլ նաև Կենտրոնական Ասիայի այնպիսի երկրներին, ինչպիսիք են Ղրղըզստանը և Թուրքմենստանը: Իսլամն ավելի խոր արմատներ ունի Ուզբեկստանում և Տաջիկստանում, ինչը բացատրվում է պատմական իրողություններով, ի մասնավորի՝ վաղ անցումը նստակեցության³²: Հարկավ նաև այս հանգամանքով էր պայմանավորված իսլամի ազդեցության բարձր մակարդակը Ղազախստանի հարավային տարածքներում, որոնք սահմանակցում են այս երկու երկրներին: Այդ մասին են վկայում նաև վիճակագրական տվյալները. եթե 1995–1998 թթ. դրությամբ Ղազախստանում գործում էր 1400 մզկիթ, Ղրղըզստանում՝ 1000, ապա Ուզբեկստանում դրանց թիվը հասել էր 6000–ի, իսկ Տաջիկստանում՝ 2000–ի³³:

Պետք է արձանագրել, որ սկսած նախախորհրդային և խորհրդային տարիներից՝ Կենտրոնական Ասիայում իսլամի ազդեցությունը ընդհանուր առմամբ ընտանեկան հարաբերությունների տիրույթից անդին չի անցել: Դրանով էր պայմանավորված նաև քաղաքական իսլամի բացակայությունը կամ գոնե թույլ արտահայտվածությունը հետխորհրդային Կենտրոնական Ասիայում:

Այս առումով մասնավորապես բավականին հետաքրքիր է դիտարկել թուրքմենական հարացույցը: Եթե Ղազախստանի պարագայում **իսլամի ապաքաղաքականացումը** արդարացվում էր բազմակրոնության և կրոնների միջև երկխոսության աջակցման միտումով, ապա Թուրքմենստանում քաղաքական ամենաբարձր մակարդակով իբրև իսլամի գաղափարախոսությանն այլընտրանք ներկայացվում էր քարիզմատիկ առաջնորդի՝ Թուրքմենբաշու հեղինակած «**Ռուհ Նաման**»³⁴: Որոշ առումով դա նոր կրոնի ստեղծման փորձ էր՝ հիմնված բարոյականության և ազգային հո-

Respubliki Kazakhstan O Religioznoi Deatelnosti I Religioznikh Obedineniakh].

30 Տևս Қазақстан Республикасының Дін Істері Және Азаматтық Қоғам Министріні, <http://www.din.gov.kz/#> [Kazakhstan Respublikasinin Din Isteri Dzene Azamatik Kogham Ministerligi].

31 Տևս Указ «О мерах по дальнейшему совершенствованию системы государственного управления Республики Казахстан», http://www.akorda.kz/ru/events/astana_kazakhstan/astana_other_events/ukaz-o-merah-po-dalnejshemu-sovershenstvovaniyu-sistemy-gosudarstvennogo-upravleniya-respubliki-kazakhstan-1 [Ukaz O merakh po dalneshemu sovershenstvovaniu sistemi gosudarstvennogo upravlenia Respubliki Kazakhstan].

32 Տևս Yerekesheva L., Religious Identity in Kazakhstan and Uzbekistan: Global-Local Interplay, Strategic Analysis, Vol. 28, No. 4, 2004. p. 582.

33 Նույն տեղում, էջ 584–585: [Ibid, pp. 584–585].

34 **Թուրքմենբաշի Ս.**, Ռուհնամա, /թրգմ., ուսումնասիրություն և մեկնություններ՝ Ա. Ստեփանյան, Եր, «Ամրոց գրուպ», 2005: [S. Turkmenbashi, Ruhnama, trgm. usumnasiutyun ev meknutyunner, A. Stepanyan, Yerevan, Amrots grup, 2005].

գևոր արժեքների վրա³⁵:

4. Թյուրքական ինքնության աշխարհաքաղաքական չափումը

Ղազախստանի հետխորհրդային ազգաշինության գործընթացում կարևոր տեղ է զբաղեցնում աշխարհաքաղաքական չափույթը: Որդեգրելով «բազմավեկտոր արտաքին քաղաքականության» հայեցակարգը՝ Ղազախստանն ընտրեց աշխարհաքաղաքական տարբեր կենտրոնների հետ հավասարակշիռ հարաբերություններ հաստատելու ճանապարհը³⁶: Նախագահ Ն. Նազարբաևը գնահատելով Ղազախստանի աշխարհագրական դիրքը, որը գտնվում է աշխարհաքաղաքականության տեսության հիմնադիրներից Հ. Մակկինդերի մատնանաշած **Միջնաշխարհի** (Heartland) ծիրում, 1994 թվականին շրջանառության մեջ դրեց «Պետությունների եվրասիական միություն» հղացքը³⁷: Այն ենթադրում էր տնտեսական, քաղաքական և մշակութային երկխոսությունների համացանցի ներդրում հետխորհրդային տարածքի Կենտրոնական Ասիայի թյուրքական և իսլամական երկրների, Ռուսաստանի և Չինաստանի հետ:

Ղազախստանի ազգային ինքնության նոր հարացույցի կարևոր բաղադրիչը՝ թյուրքական շերտը, կարևոր դեր ունի տարածաշրջանի խճանկարում, որտեղ Ղազախստանի, Ռուսաստանի և Չինաստանի աշխարհաքաղաքական շահերին առերեսվում են Թուրքիայի հավակնոտ քաղաքական նկրտումները: Մի կողմից՝ ԽՍՀՄ փլուզումից հետո առաջացած գաղափարաբանական պարապը (վակուումը), մյուս կողմից՝ ղազախական ազգաշինության թյուրքական բաղադրիչը, Կենտրոնական Ասիայում հավակնությունների նոր հնարավորություններ ստեղծեցին Թուրքիայի համար: Թուրքիայի հավակնություններում առաջնային տեղ է զբաղեցնում Կենտրոնական Ասիայում ընդհանրական թյուրքական ինքնության ձևավորումը, որն անպայման հակադրվելու է ռուսական էթնիկ, քաղաքակրթական, մշակութային և կրոնական ներկայությամբ: Չնոռանանք, որ խորհրդային իշխանությունների կողմից ռուսախոս բազմակենցիկ Ղազախստանի ստեղծման հիմքում ընկած էր նաև պանթյուրքական հակվածություն ունեցող Ուզբեկստանին հակակշռելու քաղաքականությունը:

1992 թվականին Թուրքիայի նախաձեռնությամբ ստեղծվեց «Թյուրքալեզու պետությունների համագործակցությունը», որին միացան Ղազախստանը, Ադրբեյջանը, Ղրղըզստանը, Ուզբեկստանը և Թուրքմենստանը³⁸: Ոգեշնչողները Թուրքուտ Օզալն ու Նորսուլթան Նազարբաևին էին: Ճշմարտության դեմ չնեղանչելու համար նշենք, որ այդ ժամանակ նման միավորիչ միտումները առավելապես խորհրդանշական էին, քան իրական: Իսկ իր՝ Ղազախստանի մասնակցությունը թյուրքալեզու պետությունների համա-

35 Նշենք, որ նախագահ Սափարմուրադ Նիյազովի մահից հետո «Ռուս Նամայի» ազդեցությունն աստիճանաբար թուլացվեց. փոխարինելու էր գալու նոր նախագահի հեղինակած գիրքը:

36 Տե՛ս **Weitz R.**, Kazakhstan and the New International Politics of Eurasia, (Central Asia-Caucasus Institute & Silk Road Studies Program, 2008, p. 10.

37 Հատկանշական է, որ Ատտանայում 1996 թվականին բացվեց Լ. Գումեյովի անվան Եվրասիական հետազոտությունների համալսարան:

38 Տե՛ս The Cooperation Council of Turkic Speaking States, Ministry of Foreign Affairs of the Republic of Turkey, <http://www.mfa.gov.tr/turk-konseyi-en.en.mfa>

գործակցությանը ներառում էր ներքին ինքնութենական շերտեր. բազմամյա խզումից հետո անհրաժեշտ էր գտնել թյուրքականությունն արտահայտող գլոբալ մշակութային, տնտեսական և քաղաքական հնարավորություններով օժտված մի կառույց: Այդպես օրինականացվում էր նաև դազախերենի հանրայնացման գործընթացը:

Թյուրքալեզու պետությունների համագործակցության գաղափարը սկսեց կրկին քաղաքական դիսկուրսի մաս կազմել 2009-ից ի վեր, երբ հետխորհրդային տարածքում իրենց դիրքերն էին ամրապնդում եվրասիական և եվրոպական ինտեգրացիոն նախագծերը: 2009 թվականին Նախիջևանում կայացավ թյուրքալեզու պետությունների հերթական համաժողովը, որտեղ նախագահ Ն. Նազարբաևի նախաձեռնությամբ ստեղծվեց «Թյուրքալեզու պետությունների համագործակցության խորհուրդը»: Այս կազմակերպությանը պաշտոնապես հրաժարվեցին անդամակցել Ուզբեկստանը և Թուրքմենստանը:

Անդրադառնալով խնդրի աշխարհաքաղաքական շերտին՝ նկատենք, որ երբեմնի հայկական Նախիջևանում թյուրքալեզու երկրների առաջնորդները հռչակեցին Լեռնային Ղարաբաղի հարցում Ադրբեյջանի տարածքային ամբողջականությանը սատարելու իրենց վճռականությունը: «Թյուրքալեզու պետությունների համագործակցության խորհուրդի» ստեղծումը Նախիջևանում Ադրբեյջանի ղեկավարության հղացած գաղափարն էր. դրանով կողմերը կարծես թե հաստատում էին թյուրքական աշխարհի տարածքային անընդհատությանը հասնելու իրենց նկրտումները:

Խորհրդի առաջին գագաթնաժողովը տեղի ունենցավ 2011 թվականին՝ Ալմաթիում: 2012 թվականին՝ կազմակերպության երկրորդ գագաթնաժողովում, ընդունվեց միասնական դրոշ, որը Ղըրղըզստանի դրոշի արևի, Ադրբեյջանի աստղի, Թուրքիայի կիսալուսինի և Ղազախստանի կապույտ գույնի էկլետիկ համադրությունն է³⁹:

Այնուամենայնիվ, խորհրդանշական ազդեցությունից զատ այս կառույցի վերջին տարիների նախաձեռնած մի քանի գլոբալ նախագծերը լուրջ ազդեցություն կարող են ունենալ միայն թյուրքականությանն աջակցման գործում: Կարծում ենք, այդ առումով հատկանշական են Խորհրդի 5-րդ գագաթնաժողովի (2016 թ.) հետևյալ որոշումները. **ա. միասնական ներդրումային ֆոնդի ձևավորում, բ. Թյուրքական ակադեմիայի հիմնում, որի գիտական խորհուրդը պետք է կազմված լինի անդամ երկրների կրթության նախարարներից, գ. տարածաշրջանային թյուրքախոս սփյուռքյան կենտրոնների հիմնում, դ. Քոչվորականների համաշխարհային խաղերի անցկացում, ե. թյուրքերի միասնական պատմության ստեղծում, որը պետք է ներառվի անդամ երկրների հանրակրթական ծրագրերում, գ. Թյուրքական ակադեմիայի կողմից Ղազախստանի խանության 550-ամյակին նվիրված գիտական միջոցառումների անցկացում, է. «Astana Expo 2017» ցուցահանդեսի անցկացում⁴⁰:**

39 SİU Summary Report Of The Second Summit Of The Turkic Council Bishkek – Kyrgyz Republic (22–23 August 2012).

40 SİU Cooperation of Council of Turkic Speaking States, Declaration Of The Fifth Summit Of The Cooperation Council Of Turkic Speaking States.


Ակնհայտ է, որ թյուրքախոս երկրների միավորմամբ Թուրքիան իր համար փորձում է առաջնորդի դիրքեր ապահովել: Հավակնություն, որը երբեմն հանդիպում է Ղազախստանի դիմադրությանը: Այս շրջադարձը հետագոտողները հաճախ կապում են 2012 թվականի ապրիլի 8-ին մահմեդական ուղորններով⁴¹ բնակեցված Չինաստանի Մինցզյան ինքնավար նահանգում Ռ. Էրդոդանի բարձրագույն հայտարարության հետ՝ առ այն, որ Թուրքիան պատրաստ է բոլոր միջոցներով նպաստել նրա զարգացման ծրագրերին⁴²: Այն առաջ բերեց և՛ Ռուսաստանի, և՛ Չինաստանի, և՛ Ղազախստանի բացահայտ դժգոհությունը: Ի մի բերելով ասվածը՝ նշենք, որ **Թուրքիայի մշակութային և քաղաքական ծավալումը Կենտրոնական Ասիայում կշարունակվի այնքան ժամանակ, քանի դեռ տարածաշրջանի երկրները սեփական ազգային ինքնությունը բյուրեղացնելու և սեփական վարչակարգերի լեգիտիմությունն ապահովելու պահանջ ունեն**: Դա երկարատև գործընթաց է, և խնդիրն այն է, թե կկարողանան արդյոք տարածաշրջանի երկրները հավասարակշռել թյուրքական վեկտորը աշխարհաքաղական այլ վեկտորների հետ:

Այս առումով մասնավորապես կարևոր է արևմտյան վեկտորի դերը: Ի տարբերություն Կենտրոնական Ասիայի մի շարք թյուրքական երկրների, Ղազախստանը բավականին ընդգրկուն և փոխպատասխանատվության վրա հիմնված հարաբերություններ է ստեղծել արևմտյան աշխարհի հետ: Այս համապատկերում կարևոր է փոխհարաբերությունների հաստատումը Եվրոպական Միության և ԱՄՆ-ի հետ: Ի սկզբանե, ինչպես ԵՄ-ի, այնպես էլ ԱՄՆ-ի հետ հարաբերություններում ԽՍՀՄ-ից ժառանգություն մնացած Ղազախստանի միջուկային զինանոցի ապասպառազինումը դիտարկվեց իբրև նախապայման՝ Ղազախստանին միջազգային համակարգին անդամագրելու համար: Այն ենթադրում էր ներքին բարեփոխումների բազմաշերտ գործընթաց: Նպատակին հետամուտ՝ նախագահ Ն. Նազարբանը բանաձևեց «Ուղի դեպի Եվրոպա» պետական ծրագիրը, որը 2010 թ. հավանության արժանացավ նաև ԵԱՀԿ-ի կողմից⁴³: Եվ հենց նույն թվականին էլ Ղազախստանը ստանձնեց ԵԱՀԿ նախագահությունը: Պետք է արձանագրել, որ ինչպես արևմտյան, այնպես էլ արևելյան երկրները, օրինակ՝ Իրանը, Չինաստանը նույնպես շահագրգիռ են Ղազախստանի հետ հաստատելու փոխգործակցային հարաբերություններ՝ ղազախական էներգակիրներն իրենց երկրներ հասցնելու նպատակով:

41 Նշենք, որ Ղազախստանի բնակչության 1.4 %-ն ուղորական էթնիկ խմբի ներկայացուցիչներ են: Տե՛ս **Smailov A. A., ed.**, Results of the 2009 National population of the Republic of Kazakhstan, Astana: Agency on Statistics of the Republic of Kazakhstan, 2011, p. 19.
 42 Տե՛ս Famularo J., **Erdogan Visits Xinjiang, The Diplomat, 2012.** <http://thediplomat.com/2012/04/erdogan-visits-xinjiang/>
 43 Տե՛ս **Hasanova N., Laruelle M., Peyrouse S.**, Into Eurasia Monitoring The EU's Central Asia Strategy, Center for European Policy Studies (CEPS), Brussels Fundacion Para Las Relaciones Internacionales Yel Dialogo Exterior (FRIDE), MADRID, 2010, p. 102.

Ամփոփում

Հետխորհրդային Ղազախստանում ընթանում է ազգային ինքնության նոր հարացույցի մշակման և ներդրման գործընթացը: Այն բարդ է ու բազմաչափ և պարառում է ազգային կյանքի բազում միջավայրեր՝ ինչպես ներհանրության, այնպես էլ արտաքին: Լեզու, ազգային պատումներ, կրթական համալիր, կրոնական ինքնագիտակցություն, ներէթնիկ հարաբերություններ: Ձևակերպված լինելով իբրև իմացաբանական հղացքներ՝ դրանք ներկայանում են որպես քաղաքակրթական մարտահրավերներ, որոնք պահանջում են հարիր պատասխաններ: Ղազախսական քաղաքական ընտրախավն աշխատում է հավասարակշռել մարտահրավերների բոլոր վեկտորները: ազգային-ղազախական, ռուսական, համայնության, իսլամական և արևմտյան: Թյուրքականության և Իսլամի մարտահրավերների հավասարակշռմանը զուգորդվում է մի կողմից՝ երկրի ներքին, մյուս կողմից՝ արտաքին քաղաքականությունը: Մի բարդ գործընթաց, որով փորձ է արվում մի կողմից՝ ապահովել անցումը ընդհանուր թյուրքականից դեպի ղազախականը և մյուս կողմից՝ թյուրքականությունից և ղազախականից՝ դեպի համամարդկայինը: Դա Ղազախստանն իբրև համայն մարդկության մանրակերտ ներկայացնելու փորձ է՝ տարբեր ազգերի և անհատների իրավահավասար և համերաշխ ամբողջության տեսքով, որտեղ ղազախները «առաջինն են հավասարների մեջ»: **Նպատակն է ձերբազատվել անցյալի խտորումներից, վերադառնալ նախնյաց բարբերին և կառուցել ազգային նորը՝ օգտագործելով Արևմուտքի և Արևելքի հիմնարար մտահոգևոր և արտադրական տեխնոլոգիաները:** Արդյոք սա Ն. Նազարբանևի ինքնիշխանական համակարգի ուտոպիան է, թե՞ խորքային ազգային ինքնանորացման քաղաքակրթական և երկարժամկետ ծրագիր, ցույց կտա պատմական ժամանակը:

Նարեկ Ա. Մկրտչյան – գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է հետխորհրդային շրջանի պատմության և ազգաշինության տեսությունների ուսումնասիրությունը, թեմայի մասին ունի մի շարք հրատարակություններ հայաստանյան և միջազգային գրախոսվող հանդեսներում  orcid.org/0000-0003-3539-1649.

THE CHALLENGES OF TURKISM AND ISLAM IN KAZAKHSTAN

Narek A. Mkrtchyan

Key words – Kazakhstan, Russia, nation building, national identity, Islam, Turkic Identity, securitization, Turkism .

After the collapse of the Soviet Union, many Central Asian leaders approached the nation building process as an innovative idea to their states. Former communist leaders also relied upon the discourse of nationalism to achieve public consent and to legitimize the continuity of their regimes with strong patrimonial features. Indeed, the groundwork and basis of national ideas were formed during the Soviet Union, which as the architect of national ideas in the Central Asian region created union republics based on ethnic belonging. Moreover, it would provide unique national space for the formation of cultural-national identity aimed at destroying the overarching Islamic identities. In this context, it is quite interesting to focus on the paradigm of Kazakhstan's nation building in the post-Soviet era. The Kazakh paradigm of nation building is a result of multidimensional responses to the challenges of post-Soviet history. Kazakhstan stands out among other post-Soviet countries as an example of inter-ethnic understanding, which provides not only rational but also inclusive ideas of the collectivity of diverse ethnic commonalities. In the present article, the issue under scrutiny is the challenges of Islam and Turkism in the post-Soviet Kazakhstan. President Nursultan Nazarbayev came to pursue an ambitious project of nation building, which contained components of patrimonial use of authority, ethnicizing and civic policies with emphasis on western style administration. The ethnic and civic approaches of nation building policies of Kazakhstan are unique not only in terms of multiculturalism and political stability but also for addressing Turkic and Islamic challenges. The breakdown of the Soviet Union left an ideological vacuum in Central Asia. This situation contained serious challenges and risks concerning possibly filling the vacuum with Islamic ideologies. Nevertheless, Kazakhstan did not provide Islamic responses to the challenges of post-Soviet realities; instead, it tried to overcome traditional/tribal relations and to establish innovative tendencies for the development of national ideas. Next, for the government of Kazakhstan, the exclusion of radical Islam became one of the most strategic priorities of nation/state building processes. To this end, the Nazarbaev administration pursued a policy of "securitization of foreign Islam" to keep Kazakstan far from the external influence of radical/political Islam and have balanced relations with the Christian Russia. Compared to other Central Asian countries Kazakhstan is more open to the world. To maintain the balance of power among Russia, China, Iran, United States, European Union and Turkic states the Nazarbaev administration proclaimed about Kazakhstan's multi-vector foreign policy.

ВЫЗОВЫ ТЮРКИЗМА И ИСЛАМА В КАЗАХСТАНЕ

Нарек А. Мкртчян

Ключевые слова – Казахстан, Россия, национальное строительство, национальная идентичность, ислам, тюркская идентичность, «секьюритизация», тюркизм.

С падением СССР многие лидеры Центральной Азии стали рассматривать проблемы национального строительства в свете новых идей и подходов. Стали применять новейшие дискурсы национализма с целью достижения внутрисоциального консенсуса и легитимизации своих властных режимов с ярко выраженными чертами патримонии. По сути, это было продолжением советского опыта, основанного на идее национально-культурной и политической идентичности. Однако, опыт этот был построен на коммунистических квази ценностях, и новым лидерам предстояло «поправить ситуацию». Одним из путей достижения этой цели считалось восстановление национальных корней в виде ислама и идеи тюркизма.

Казахстанский опыт этого процесса был построен на парадигме многовекторных ответов на цивилизационные вызовы. Страна стала выделяться среди соседей своей взвешанной политикой к национальным проблемам, нацеленной на единение всех народов вокруг общих культурных, социальных, религиозных и политических проектов. Векторы ислама и тюркизма рассматривались именно в этом ключе. Н. Назарбаев стал использовать их для претворения своих амбициозных планов национального строительства. Однако президент и правящая элита ясно осознают также опасности и риски этого процесса. С целью избежать их, ставилась двойная задача: а. преодолеть традиционный трайбализм и сформировать современные социальные отношения, построенные на рационализме, законности и гражданской солидарности, б. в целях исключения любой возможности проникновения радикального ислама и тюркизма в казахское общество, сбалансировать духовное общение с западными странами и с Россией. В результате этого цивилизационного выбора, Казахстан – это страна, открытая ко всему миру и готовая сотрудничать в равной мере с Россией, Китаем, Индией, Ираном, Турцией, Евросоюзом, США. Такая политика Н. Назарбаева сформулирована в концепции «многовекторности локальной казахской цивилизации».